

137. ԻՐԵՔ ՀԱՐՑ

Պարսկաստանեն թաքավորը ուրան քվորը իրեք տղորանցը ճոկ-ճոկ ծեն ա տալ ուրան կոշտը։ Մըեծեն հըրցնում ա, թա՝ հինչն ա՞ ըխշարքումը ամենաճելի քյինողը։ Մըեծ տղան թա՝ քու քյիհլան ծիտ ա։ Թաքավորը ծըեռքը թափ ա տալ, թա՝ քըզանա պեն չի տիա կլալ, քյինան։

Մըչնակեն ա ծեն տալ, տըրան էլ հըրցընում ա, թա ինչն ա՞ ըխշարքես ամենաքյոք պենը։ Մաչնակ տղան թա՝ քու էրկու տըրեկան, կորմիտ ընելիս ղոչը։

Տըրան էլ ա ասում, թա՝ քըզանա պեն չի ինիլ։

Կուճուրը վըեր կլալ ա, հըրցնում ա, թա հինչն ա՞ ըխշարքես ամենաքախծր պենը։ Կուճուր տղան ասում ա՝ շագալաթը։ Թաքավորը տրանա յել ա ծըեռք յոր օնում, վըեչ մինին իրեսեն էլ եշում չի։

Հունց ա պըտահում, հանմին քըղաքումը մին քյանիր տղա յա ծնվում։ Տա վըեր օխտը տըրեկան ա տըեռնում, քաղաքումն ըստեղ-ընդեղ ասում ա.—Թաքավորն ուրան քըվորը տղորանցան ծըեռք քաշից զուտ էն հարցերեն պատասխանը չտալի հետ, եվ օղում ըմ քյինանմ էտ տղորանցն իրեսը պարզ անեմ։

Խաբարը հասնում ա թաքավորին մարթուցը, մինչև սենատը։ Վերջը, սենատորնեն ասում են, թա թաքավորը մրեզ խայտառակ կանե, լավն էն ա, վրեր թաքավորին ասենքյվուշ, թա իստի տղա կա, վրեր օգում ա օխտը տարն առաջ քվորբտ տղորանցը տուված հարցերեն պատասխանե։

Էտ տղան քյինամ ա թաքավորին պալատը, տրրանը մուտանում ա, ըսկսում ա լաց ինիլը։ Թաքավորն ասում ա.—Տրան պերեքյ կոշտրա։ Պուրում ըն տրա դարդը հարցնում, տղան թաքավորին ասում ա.—Քվորբտ տղորանցան զուր ես ծրեռք քաշալ, ես նահանց տուված հարցերեն պատասխանը կարող եմ տամ։ Էն վրեր հարցրրալ ես թա ամենամեծի քյինոդը հինչն ա, տա մարթին մրեռկն ա, ամենաքյոքը վրեղն ա, ամենաքախծրրը՝ քոնը։

Թաքավորը ուրան մարթուցը ծեն ա տամ, տրրան հունցը վրեր հարկավրեր ա, վրեսկավ, թինգյանան քրրերավ-պենավ հրդե տինում։